ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/50 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի մայիսի 14-ին կնքված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/50-2 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունիսի 08-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ Մեծամորի համայնքապետարանի և «ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ» Ա/Ձ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունիսի 08-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը նոր խմբագրությամբ, համաձայն՝ Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2026 թվականի մայիսի 14-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/50-2 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**